Արձանագրություն N 2-3

ՀՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-24/27 ծածկագրով ՀՀ Տավուշի մարզի Աճարկուտ բնակավայրում մի ցանցանի բասկետբոլի դաշտի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10.10.2024թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց
Հանձնաժողովի անդամներ ՝ Ս. Նունյան
Հ. Հարությունյան
Հ. Գինովյան
Ա. Մարգարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

1. Գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների և դրանց շտկման մասին

(Մ. Աղայանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 08.10.2024թ. ծանուցվել է <<ՍԹԱՐ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ և <<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ կոնսորցիումին և <<ԲՆՎ>> ՍՊԸ-ին՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջիններիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5 ,դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների մասին

(Մ. Աղայանց)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ ճանաչել հետևյալ կազմակերպություններին.

Գնման առարկայի անվանումը	Ընտրված մասնակից	Այդպիսին չճանաչված մասնակից
ՀՀ Տավուշի մարզի Աճարկուտ բնակավայրում մի ցանցանի բասկետբոլի դաշտի կառուցման աշխատանքներ	<<ՍԹԱՐ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ և <<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ կոնսորցիում	Իջևանի Բենտոնիտշին ԲԲԸ
		ՄՄԼ ՍՊԸ
		Վենկո Ալտեկո ՍՊԸ
		ԱՐՏԱՐՍ ՍՊԸ
		ԽԱՉՄԻՇՇԻՆ ՍՊԸ
		Գեոպրոեկտ ՍՊԸ
		ԲՆՎ ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ –5 ,դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Մ. Աղայանց)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ <<ՍԹԱՐ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ և <<ՄԱՎՇԻՆ>> ՍՊԸ կոնսորցիումին:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5 ,դեմ - 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Աղայանց)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5 ,դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Աղայանց

Անդամ՝ ---------- Ս. Նունյան

---------- Հ. Հարությունյան

---------- Հ. Գինովյան

---------- Ա. Մարգարյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Գ. Հակոբյան